ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՄԻՊԱ-ԳՀԾՁԲ-18/9-1 -9

ք. Երևան «16» Դեկտեմբեր 2018 թ.

«ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի քարտուղարության ղեկավար՝ Տ. Մարտիրոսյանի, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Բևեռային ուղի>>ն, ի դեմս տնօրեն Ամալյա Հակոբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 /տասը/ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 131 850 (հարյուր երեսունմեկ հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

---

[1] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[2]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ք. Երևան, Պուշկինի 56ա ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն Հ/Հ 900011023067 ՀՎՀՀ 02572073	<<Բևեռային ուղի>> ՍՊԸ Ք.Երևան, Մանանդյան 25շ., բն.6 <<Արարատբանկ>> ԲԲԸ Հ/Հ 1510032345990100 ՀՎՀՀ 02228306
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«16» մարտ 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՄԻՊԱ-ԳՀԾՁԲ-18/9-1 – 9

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության					
գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
				հասցեն	ժամկետը
50531200	դրամ	131850	1	ք. Երևան, Պուշկինի 56ա	Պատվիրատուի կողմից պահանջ ներկայացնելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում մինչև 2018թ, դեկտեմբերի 20-ը
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը և չափաբաժիններում ներառված ծառայությունների գները	տեխնիկական բնութագրերը				
1-ին	**Համակարգիչների եւ Ցանցային սարքերի սպասարկում**				
6000	Պրոֆիլակտիկա				
30	BIOS -ի վերածրագրավորում				
30	Համակարգչային պահարանի հովացուցիչի փոխարինում ներառյալ Cooler				
30	CPU-ի հովացուցիչի փոխարինում կամ տեղադրում ներառյալ Պ4 Ինթել ՍՊՈՒ-ի հովացուցիչ օրիգինալ (Cooler for CPU P4 Intel original), կամ համարժեքը				
30	CPU-ի հովացուցիչի փոխարինում կամ տեղադրում ներառյալ համապատասխան (LGA775, LGA 1150, LGA 1156, LGA 1155, Socket G1, Socket G2, LGA-1151) սոկետի համար նախատեսված, կամ համարժեքը				
	MB (Հիմնական տպասալիկ)				
6000	MB նորոգում նեռարյալ պահեստամասեր				
30	MB չիփսեթի փողարինում կամ տեղադրում				
30	MB փոխարինում կամ տեղադրում ներառյալ 478 սոկետ ՎԳԱ օն բորդ, (478 socket, VGA on board), կամ համարժեքը				
30000	MB փոխարինում կամ տեղադրում ներառյալ Ասուս Ինտել Հ110 չիպսեթ, ASUS Intel H110 chipset,PCI-Exp) կամ համարժեքը				
30	MB փոխարինում կամ տեղադրում ներառյալ Ասուս Ինտել Հ67 չիպսեթ, (ASUS Intel H67 chipset, PCI-Exp) կամ համարժեքը				
	Պրոցեսորի (CPU) սպասարկում				
30	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Պենտիում 4/2.4գ 533/800 մhg 478 փին (CPU P4/2,4g 533/800 mhz 478pin),կամ համարժեքը				
30	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Պենտիում 4 ԼՋԱ775 3.0ԳՀՑ 1Մ 800ՄՀՑ (LGA775 3.0GHZ 1M 800MHZ),կամ համարժեքը				
30	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Դուալ Քորե Դ 820 (2,8ԳՀg) ԼՋԱ775, 2x1024, 800ՄՀg (Dual Core D 820 (2,8GHz) LGA775, 2x1024, 800MHz), կամ համարժեքը				
30	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Քորե 2 Դուո Ե7300 (2,66ԳՀg) , 3072, 1066ՄՀg (Core 2 Duo E7300 (2,66GHz), 3072, 1066MHz), կամ համարժեքը				
30	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Քորե 2 Դուո Ե8300 (2,8ԳՀg), 6144, 1333ՄՀg (Core 2 Duo E8300 (2,8GHz), 6144, 1333MHz), կամ համարժեքը				

30	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Քորե ի5 2400 (3.1ԳՀg) , 6144, 1333ՄՀg (Core i5 2400 (3.1GHz), 6144, 1333MHz), կամ համարժեքը
30	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Քորե ի3 առաջին սերնդի, կամ համարժեքը
30	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Քորե ի3 երկրորդ սերնդի, կամ համարժեքը
30	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Քորե ի3 երրորդ սերնդի, կամ համարժեքը
30	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Քորե ի3 չորրորդ սերնդի, կամ համարժեքը
30	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Քորե ի3 վեցերորդ սերնդի, կամ համարժեքը
30	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Քորե ի5 երկրորդ սերնդի, կամ համարժեքը
30	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Քորե ի5 երրորդ սերնդի, կամ համարժեքը
30	CPU փոխարինում կամ տեղադրում ներառյալ Քորե ի5 չորրորդ սերնդի, կամ համարժեքը
	Օպերատիվ հիշողության (RAM) սպասարկում
30	RAM փոխարինում կամ տեղադրում ներառյալ ԴԴՌ400 512ՄԲ ՊՍ3200 (DDR400 512MB PC3200),կամ համարժեքը
30	RAM փոխարինում կամ տեղադրում ներառյաւ ԴԴՌ400 1024ՄԲ ՊՍ3200 (DDR400 1024MB PC3200),կամ համարժեքը
30	RAM փոխարինում կամ տեղադրում ներառյալ ԴԴՌ4 4 ԳԲ 2133ՄՀՑ (DDR4 4GB 2133MHZ),կամ համարժեքը
21000	RAM փոխարինում կամ տեղադրում ներառյալ ԴԴՌ2 1024Մ 667/800ՄՀՑ (DDR2 1024M 667/800MHZ),կամ համարժեքը
30	RAM փոխարինում կամ տեղադրում ներառյալ ԴԴՌ2 2048Մ 667/800ՄՀՑ (DDR2 2048M 667/800MHZ),կամ համարժեքը
18000	RAM փոխարինում կամ տեղադրում ներառյալ ԴԴՌ3 2048Մ 1333ՄՀՑ (DDR3 2048M 1333MHZ),կամ համարժեքը
	Վիդեոքարտերի սպասարկում
30	SVGA փոխարինում կամ տեղադրում ներառյալ էԳիՊի 256մբ(AGP 256Mb) կամ համարժեքը
24000	SVGA փոխարինում կամ տեղադրում ներառյալ Նվիդիա ՋիՖ 1024Մբ ՊիՍիԱյ-էքսպ (Nvidia GF 1024Mb PCI Exp) կամ համարժեքը
	Կոշտ սկավառակների (HDD) սպասարկում
30	HDD փոխարինում կամ տեղադրում ներառյալ ՀԴԴ 500գբ 7200ռպմ (HDD 500GB 7200RPM),կամ համարժեքը
33000	HDD փոխարինում կամ տեղադրում ներառարյալ ՀԴԴ 1000գբ 7200ռպմ (HDD 1TB 7200RPM),կամ համարժեքը
	Օպտիկական սկավառակիրների սպասարկում
30	CD-RW, DVD-RW նորոգում
30	DVD-RW փոխարինում կամ տեղադրում ներառյալ ԴՎԴ-ՌՎ(DVD-RW),կամ համարժեքը
	Սնուցման աղբյուրների սպասարկում
3600	Սնուցման բլոկի նորոգում ներառյալ պահեստամասեր
7500	Սնուցման բլոկի փոխարինում կամ տեղադրում ներառյալ Սնուցման բլոկ 500 Վատ (Power supply Case 500W), կամ համարժեքը
	Ցանցային սարքերի սպասարկում
3000	Ցանցային քարտի տեղադռում ներառյալ Ցանցային քարտ 10/100 Դ-լինկ (D-link 10/100), կամ համարժեքը
30	Ցանցային կոմուտատորի վերանորոգում ներառյալ պահեստամասեր
30	Ցանցային կոմուտատորի փոխարինում կամ տեղադրում ներարյալ ցանցային կոմուտատոր 5 պորտ 10/100 Mbps
15000	Ցանցային կոմուտատորի փոխարինում կամ տեղադրում ներարյալ ցանցային կոմուտատոր 8 պորտ 10/100 Mbps

30	Ցանցային կոմուտատորի փոխարինում կամ տեղադրում ներարյալ ցանցային կոմուտատոր 16 պորտ 10/100 Mbps
30	Ցանցային կոմուտատորի փոխարինում կամ տեղադրում ներարյալ ցանցային կոմուտատոր 24 պորտ 10/100 Mbps
2-րդ	**Նոութբուքի սպասարկում**
6000	Պրոֆիլակտիկա
6000	Նոութբուքի վերանորոգում ներառյալ պահեստամասեր
30	Նոութբուքի կոշտ սկավառակի փոխարինում կամ տեղադրում ՍԱՏԱ 500գբ 5400ռպմ (SATA 500gb 5400rpm)
30	Նոութբուքի կոշտ սկավառակի փոխարինում կամ տեղադրում ՍՍԴ 256գբ (SATA 256 gb)
3-րդ	**Մոնիտորի սպասարկում**
30	ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 17"
30	Վերանորոգում (ֆոկուսի կարգավորում,գունահամատեղող մեխանիգմի կարգաբերում)
7500	Վերանորոգում (վնասված մասերի փոխարինում)
6-րդ	**Լազերային տպիչի սպասարկում**
9000	Պրոֆիլակտիկա
30	Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում ներառյալ Տեֆլոնե լիսեռ (HP/Canon կամ համարժեքը)
30	Վառարանի թերմո թաղանթի փոխարինում (պահեստամասերով)
30	Վառարանի ռետինե լիսերի փոխարինում (պահեստամասերով)
30	Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում ներառյալ Թղթի տրման ռետինե լիսեռ (HP LJ 1018/1020/1300/1320/1160/P1102/3050/2015 Canon 3010/4410/, կամ համարժեքը)
7-րդ	**Թանաքաշիթային տպիչի սպասարկում**
9000	Պրոֆիլակտիկա Epson L110, Canon ip2700
30	Վերանորոգում (առանց պահեստամասերի) Epson L110, Canon ip2700
30	Վերանորոգում պահեստամասրով Epson L110, Canon ip2700
8-րդ	**Պատճենահանող սարքի սպասարկում**
9000	Պրոֆիլակտիկա
60	Էլեկտրոնիկայի վերանորոգում
30	Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի տեֆլոնե լիսեռ Canon PC860/7161 կամ համարժեքը
30	Վառարանի թերմոթաղանթի փոխարինում ներառյալ Վառարանի տեֆլոնե լիսեռ Canon PC860/7161 կամ համարժեքը
30	Վառարանի ռեգինե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի ռետինե լիսեռ Canon PC860/7161 կամ համարժեքը
30	Վառարանի ֆետրե լիսեռի փոխարինում ներառյալ Վառարանի ֆետրե լիսեռ Canon PC860/7161 կամ համարժեքը
6000	Թմբուկի փոխարինում ներառաւ Թմբուկ Canon կամ համարժեքը
30	Թմբուկի փոխարինում ներառյալ Թմբուկ Canon PC860/7161 կամ համարժեքը

30	Սքաների Լամպի փոխարինում ներառյալ Լամպը A3 լումինիսցենտային, կամ համարժեքը
30	Կարոտրոնի բլոկի փոխարինում
30	Կարոտրոնի լարի փոխարինում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մարդու իրավունքների
աշխատակազմ
ք. Երևան, Պուշկինի 56ա
ՀՀ ՖՆ Գործառնական պաշտպանի
վարչություն
Հ/Հ 900011023067
ՀՎՀՀ 02572073

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Բևեռային ուղի>> ՍՊԸ
Ք.Երևան, Մանանդյան 25շ., բն.6
<<Արարատբանկ>> ԲԲԸ
h/h 1510032345990100
ՀՎՀՀ 02228306

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
« 16 » նոյեմբեր 2018 թ. կնքված
ՄԻՊԱ-ԳՀԾՁԲ-18/9-1-Ց ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության													
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում										
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50531200	Էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայություններ	0.0	30000	30000	30000	80000	80000	80000	131850	131850	131850	131850
2													
3													
6													
7													
8													

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մարդու իրավունքների
պաշտպանի աշխատակազմ
ք. Երևան, Պուշկինի 56ա
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011023067
ՀՎՀՀ 02572073

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Բևեռային ուղի>> ՍՊԸ
Ք.Երևան, Մանանդյան 25շ., բն.6
<<Արարատբանկ>> ԲԲԸ
h/h 1510032345990100
ՀՎՀՀ 02228306

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
« 16 » Մարտի 2018թ. կնքված
ՄԻՊԱ-ԳՀԾՁԲ-18/9-1-Ց ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 16 » մարտի 2018 թ. կնքված
ՄԻՊԱ-ԳՀԾՁԲ-18/9-1-9 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն